

# Գրական

# Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԲԱԹԱԹԵՐԹ \* ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տ ա ա գ ր վ ու մ է Յ Յ Մ շ ա կ ու լ յ թ ի ն ա խ ա ր ա ր ու թ յ ա ն ա ջ ա կ ց ու թ յ ա մ ք



## Ռուզան ԱՍԱՏՐՅԱՆ

Ո՛չ ինքնաարդարացման, ո՛չ մեղա գալու ժամանակ չունենք, լսում եք, պարոնայք «նախկիններ ու ներկաներ»: Մեր անցյալ ու ներկա անփութության, անպատասխանատվության, հայրենիքը սեփական շահերին ծառայեցնելու, ընչաքաղցության, դիվանագիտության բացակայության և այլ ու այլ ազգությամբ և ազգամուտաց իրողությունների պատճառով մենք այսօր կրկին կանգնեցինք հայերիս ծաղկուն գեներ ու տարածքները կորցնելու անփառունակ փաստի առաջ: Փոխանակ մեծ ու փոքրով համախմբվելու, մեր փշրված բեկորները իրար վրա բերելու, հայերիս կոտրված մեջքը շտկելու՝ այս ծանր ու անհաշտ կորուստների օրերին, երբ միջազգային ուժերի աջակցությամբ և 30 արծաթով ծախվածների ձեռամբ հանձնվեց Արցախի 70 տոկոսը և Հայաստանի սահմաններն ընկան GPS-ների անթույլատրելի կողպուտի տակ, աջ ու ահյակ ատելության ու ինքնավարկարեկման կոչեր են հնչում, որն ավելի է հուսահատեցնում իր գավակներին կորցրած, Եռաբլուրի ցավին ձուլված, հաշմանդամների անպատասխան ինչուներին խոնարհ մեր հայրենակիցներին: Բավ է, խեղճի եկեք, թուրքը Հայաստանն ուզում է առանց հայերի,

վելու, մեր փշրված բեկորները իրար վրա բերելու, հայերիս կոտրված մեջքը շտկելու՝ այս ծանր ու անհաշտ կորուստների օրերին, երբ միջազգային ուժերի աջակցությամբ և 30 արծաթով ծախվածների ձեռամբ հանձնվեց Արցախի 70 տոկոսը և Հայաստանի սահմաններն ընկան GPS-ների անթույլատրելի կողպուտի տակ, աջ ու ահյակ ատելության ու ինքնավարկարեկման կոչեր են հնչում, որն ավելի է հուսահատեցնում իր գավակներին կորցրած, Եռաբլուրի ցավին ձուլված, հաշմանդամների անպատասխան ինչուներին խոնարհ մեր հայրենակիցներին: Բավ է, խեղճի եկեք, թուրքը Հայաստանն ուզում է առանց հայերի,


## ԱՅՍ ՕՐԵՐԻ ՀՐԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

բաց արեք ձեր ուղեղների ծալքերը... Երիցս ճիշտ էր Չարենցը, այո՛, ես էլ եմ հարցնում, որ Հայրենիքը մի՞Ք է միգուցե, այլապես ամեն տիպի կոչեր ու վերլուծություններ են հնչում հանրահավաքներում, բացի երկիրը վերակենդանացնելու, առողջացնելու, երկրի վերքերը բուժելու հնարավոր առաջարկներից: Պարոնայք, ո՞ր են ձեր ծրագրերը, ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի վաղվա օրը. Հայաստանի կենսական անհրաժեշտության ոչ մի խոսք չլսվեց այս երկու-երեք ամիսների ընթացքում: Եթե դուք վաղն եք գալու, ո՞ր է Հայաստանը վերաշնչավորելու ձեր քարտեզը, վաղն ումի՞ց ենք պահանջելու զրոյական խոստումի պատասխանները... Եղածը մի՞թե քիչ է: Այո՛, Նիկոլ Փաշինյանը մեզ «թավշահար» արեց, և մենք բոլորս կիսախեղազար վիճակում ենք, նա վաղուց պետք է հրաժեշտ տված լինեք, ինչը շատ ժամանակին ու տեղին անում են մեր հարևան վրացիները: Նրանց երիտասարդ վարչապետը հայտարարեց, որ իր պետության և հասարակության կայունությունն ավելին արժե, քան իր աթոռը: Իսկ մե՞զ մոտ... Ձեր անձերի հետ կապ չունի առաջարկս՝ կապիտուլյացիայի ենթարկված երկրի երակները կտրված են, նրան ոչ մի պետություն չի ընդառաջի, չհամոզվեցինք:

Անհրաժեշտ է մոբիլիզացնել ողջ հայության ուժերը, էլ ժամանակը չէ դատարկ խոսքերով կայանալու, Հայաստանը փոքր երկիր է, բոլորս իրար ճանաչում ենք, այս պարտությունը բոլորիս պարտությունն է, եթե ուզում եք երկրին տեր լինել, իշխանության գալուց ձեր մտքից հանեք միայն սեփական տոհմային ու թիմային հարստություն կուտակելու խնդիրը: Երկրի հողը պետք է սնել, որ նա քեզ պահի... Մտածեք միայն մի բուռ մնացած և թշնամու երախում հայտնված հայրենիքի փրկության մասին, ամենամեծ հարստությունը Հայրենիքն է, վերջ տվեք արտիստական ճամարտակություններին, մոռացե՛ք կուսակցություն ու թիմայնություն, ազգը մեկ թիմ ունի՝ ՀԱՅՐԵՆԻՔ, ազգովի ԱԶԳ ԲԱՆԱԿԻ վերածվենք մեկ նպատակով՝ հանուն Հայության փրկության, սթափվենք, բարեկամներ, սթափվենք... Ելնելով երկրի անպաշտպանվածությունից՝ առաջարկում եմ ստեղծել ժամանակավոր ռազմական կառավարություն, ձեռք բերելով նոր դաշնակիցներ՝ նոր կայունության համար...

## Սամվել ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Մենք ժամանակավորապես զոհաբերում ենք հայ աշխարհավորության շահերը համաշխարհային հեղափոխության շահերին»...  
Լենին (1921 թ. մարտ)



2021 թվականի մարտին լրանում է ռուս-թուրքական (մոսկովյան) անօրինական պայմանագրի կնքման 100 տարին: 100 տարի առաջ Մոսկվայում բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքվեց եղբայրության և բարեկամության պայմանագիր: Հայաստանի պատվիրակությանը թույլ չեն տվել մասնակցել բանակցություններին: Հաշվի չառնելով հայ ժողովրդի կարծիքը, օրինական պահանջները՝ ռուսական

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ԹԵ ՇՈՒՏ ԿՀԱՂԹԱՆԱԿԻ

Ռուս-թուրքական (մոսկովյան) պայմանագիր-100

կողմը Լենինի և Ստալինի համաձայնությամբ, Կարսը, Արդահանը, Սարիղամիշը, Սուրմալուի գավառը (Իգդիրը, Բայազետը) հանձնում են Թուրքիային, Նախիջևանը, այնուհետև Ղարաբաղը՝ Ադրբեջանին: Մի Բաթում քաղաք չկորցնելու համար (վրացական Բաթում քաղաքը այն ժամանակ գտնվում էր թուրքերի ձեռքում), Ստալինի գաղտնի համաձայնությամբ, Սուրմալուի ամբողջ գավառը հանձնվում է Թուրքիային: Մոսկովյան պայմանագրին հաջորդեց Կարսի պայմանագիրը (1921 թ. 13 հոկտեմբեր): Կարսի պայմանագիրը մոսկովյան պայմանագրի օրգանական շարունակությունն էր: Այն հաստատվեց Մոսկվայի պահանջով:

Չկայացավ Լենինի համաշխարհային հեղափոխության մասին կանխատեսումը: Թուրքիայի հանրապետության նախագահ, բոլշևիկյան գաղափարախոսության սուտ, կեղծ ջատագով Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը խաբեց Լենինին՝ Խորհրդային Ռուսաստանից կորզելով մեծ քանակությամբ զենք, ոսկի: Ի դեպ, այդ տարիներին՝ 1920 - 1921 թթ., շարունակվում էր հույն-թուրքական պատերազմը: Հունական բանակը մոտենում էր Կոստանդնուպոլսին: Լենինը Թուրքիա ուղարկեց զենք, ոսկի և տաղանդավոր զորահրամանատար Ֆրունզեին, որը ծանոթանալով ռազմական իրավիճակին, գրոհի տարավ թուրքական բանակին և կոտորեց հույներին:

100 տարի է անցնում: Լրանում է այդ խայտառակ պայմանագրի կնքման ժամկետը: Պայմանագիր, որ ծառայեց ի շահ Թուրքիայի, Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի: Պայմանագիր, որի ծանր հետևանքներից առ այսօր տառապում է հայ ժողովուրդը:

Այսօր հայ ժողովուրդը, եղբայրական Ռուսաստանը լիովին իրավունք ունեն պահանջելու մեր պատմական հայրենիքի այն տարածքները, որ Խորհրդային Ռուսաստանը հանձնեց Թուրքիային ու Ադրբեջանին, առանց հայ ժողովրդի համաձայնության՝ անտեսելով հայ ժողովրդի իրավունքները:

Թուրքերը շատ լավ գիտեն, որ լրանում է պայմանագրի հաստատման 100 տարին: Նրանք փորձում են սպառնալիքներով, թուրք-ադրբեջանական ագրեսիայով ահաբեկել հայ ժողովրդին, շեղել աշխարհի ուշադրությունը պատմական անօրինական իրողությունից: Դար է անցել, դարեր էլ անցնեն՝ ճշմարտությունը կհաղթանակի:

«Գրական թերթի» հաջորդ՝ թիվ 5 (3501)-րդ համարը լույս կրեսնի պրպագիր պարբերակով:

գրական անցուդարձ գրական անցուդարձ գրական անցուդարձ գրական անցուդարձ գրական անցուդարձ գրական անցուդարձ

### Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ

Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքը փետրվարի 19-ին Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ իրանահայ բանաստեղծուհի, այժմ Լոնդոնում բնակվող Շողիկ Սահակյան-Մինասյանի «Օրերի կանչը» և «Գանձատուփ» գրքերի օրինակներ է նվիրել Լոռու մարզային գրադարանին, Վանաձորի Հրատ Մաթևոսյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգին, Ստեփան Ջոռյանի տուն-թանգարանին, Վանաձորի Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանին, Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանին:

Գրքերը բաժանմունքին է տրամադրել Հայաստանի գրողների միությունը:

Սեփ. Լրտ.

Իտալական “Il Meleto di Guido Gozzano” ամենամյա մրցույթին այս տարի ևս մասնակցել են տարբեր երկրների մեծ թվով հեղինակներ: Թարգմանվելու և գրքում տպագրվելու համար ընտրությունը կանգ է առել 44 երկրների հեղինակների ստեղծագործությունների վրա: Այդ երկրների շարքում ընդգրկված է նաև Հայաստանը: Ստեղծագործության հեղինակը արձակագիր, բանաստեղծ Արմենուհի Միսյանն է: Նրա բանաստեղծությունը թարգմանվել է իտալերեն, տպագրվել է նաև հայերեն բնագիրը, իսկ հեղինակին շնորհվել է պատվոգիր:



### ԺԱՄԱՆԱԿԸ ՊԻՏԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՌՆԱ

Փետրվարի 19-ին Կոր սրահում տեղի ունեցավ ՀԳՄ՝ Հայոց բանակին նվիրված և «Հրատ և Մանուշակ Մինոյաններ» մրցանակաբաշխությունների մրցանակների հանձնման արարողությունը: ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, նշելով, որ փետրվարի 19-ը՝ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը, արդեն ավանդաբար նշվում է որպես Գիրք նվիրելու օր, նկատեց, որ այն նպաստում է ընթերցանության տարածմանը, ինչպես նաև հիշատակում Մեծ բանաստեղծի սերը գրքի, մշակույթի հանդեպ:

Էդ. Միլիտոնյանի հավաստմամբ՝ վերջին տարիներին Գիրք նվիրելու օրը նաև միջազգային բնույթ է կրում, մասնավորապես՝ Վրաստանում, Լիբանանում, Սիրիայում հայախոս մեծ համայնքների գրողական խմբերը ևս նշանավորում էին այդ օրը: «Հատկապես Թբիլիսիում, եկեղեցու առաջնորդությամբ, գնում են Պանթեոն, ծաղիկներ դնում մեր մեծերի հուշաքարերին, հետո նշում են և՛ Հովհաննես Թումանյանի ծնունդը, և՛ Գիրք նվիրելու օրն են պանծացնում», - մասնավորապես ասաց ՀԳՄ նախագահը և հավելեց. «Գիրք նվիրելու օրվա ամենակարևոր խորհուրդը՝ առաջին հերթին դու պիտի գիրք նվիրես, ոչ թե սպասես՝ քեզ նվիրեն: Եվ դա իսկապես համաժողովրդական բնույթ կունենա»: Նա տեղեկացրեց, որ անցյալ տարվա ընթացքում հայտարարված մի շարք մրցանակաբաշխություններ հասցրել են ամփոփել («Կանթեղ», Հրատ Մաթևոսյանի անվան), սակայն պատերազմի ամիսներին, ինչպես նաև տարեվերջին, հնարավոր չէր ամփոփել մի շարք այլ մրցանակաբաշխություններ, որոնք հայտարարվել էին, իսկ գրքերը՝ ներկայացվել: Անդրադառնալով Հայոց բանակին նվիրված և «Հրատ և Մանուշակ Մինոյաններ» մրցանակաբաշխության արդյունքների ամփոփմանը՝ նա նկատեց, որ դրանք թեև տարբեր են, բայց էությունը նույն է՝ հանրահոշակել ժամանակակից գրականությունը: «Լավ գրողի համար մրցանակը երևի թե նշանակություն չունի, բայց նշանակություն ունի ընթերցողի համար՝ տեղեկանալու նոր լույս տեսած գրքերի մասին և ճանաչելու ժամանակակից գրողներին», - ընդգծեց ՀԳՄ նախագահը: Այնուհետև հանձնվեցին մրցանակները:

2020 թվականի ՀԳՄ՝ Հայոց բանակին նվիրված մրցանակաբաշխության գեղարվեստական արձակ անվանակարգի 1-ին մրցանակը հանձնվեց **Սուսաննա Հարությունյանին**՝ «Խոլ ու համր», 2-րդ մրցանակը՝ **Գոհար Գալստյանին**՝ «Գետնից բարձր» պատմվածքների, 3-րդ մրցանակը՝ **Ռոբերտ Եսայանին**՝ «Արամորդու գիրք» գրքի համար: Պոեզիա անվանակարգում 1-ին մրցանակի արժանացավ **Նորայր Գրիգորյանը**՝ «Առաջնագիծ» գրքի, 2-րդ մրցանակի՝ **Սոնա Համբարձումը** և **Ռուզան Հովասափյանը** բանաստեղծական շարքերի համար, 3-րդ մրցանակի՝ **Հովիկ Գրիգորյանը**՝ «Նախընտրվածներ» և **Գրիգոր Մելիք-Մարգարյանը**՝ «Սրբազան հայրենիք» գրքերի համար: Հրապարակագրության, գրաքննադատության ժանրի մրցանակները շնորհվեցին **Վարդգես Խանոյանին**՝ «Հայրենյաց գիսվորները» գրքի և **Արտաշես Արամին**՝ հոդվածների և բանաստեղծական շարքի համար: Հայոց բանակին նվիրված գրական անթոլոգիաների, գրական-տեսական աշխատությունների մրցանակը շնորհվեց **Հրանտիկին**՝ «Միշտ հաղթելու ենք» գրքի համար: Հանձնաժողովը որոշեց հատուկ մրցանակներ շնորհել **Վարդան Ավետիսյան-Քյարունցին**՝ «Հիսուս Քրիստոսի...» գրքի և **Նեմրուդին** (Մերգեյ Ասատրյան)՝ բանաստեղծական շարքի համար: ԵԿՄ՝ Վազգեն Մարգարյանի անվան մրցանակը շնորհվեց **Հովիկ Վարդումյանին**՝ «Գթության քույրը» պատմվածքի և **Վաչագան Մանուկյանին** (հետմահու)՝ «Մահից յոթ րոպե առաջ» գրքի համար: 2020 թվականի «Հրատ և Մանուշակ Մինոյաններ» մրցանակաբաշխության արձակ անվանակարգում մրցանակը տրվեց **Ժաննա Հակոբյանին**՝ «Փրկողակ» վեպի համար, պոեզիա անվանակարգում Մաթենիկ Ղազարյանին՝ «Անցումային...», **Սամվել Մարգարյանին**՝ «Տիեզերական սեր», **Ռուզան Հովհաննիսյանին**՝ «Արգելակման ճառագայթում», **Սուրբատ Խանյանին**՝ «Կրակ չէ, ինչ է» գրքերի համար: Հրապարակախոսություն անվանակարգում մրցանակի արժանացավ **Հովհաննես Պապիկյանը**՝ «Անավարտ գրույցներ» գրքի համար: Իսպիկ Մանուկյանը, շնորհակալություն հայտնելով մրցանակի համար, նկատեց. «Հայրենասիրությունը ոչ թե պլակատային, այլ ըստ էության է՛ն խոսքն է, որով մարդը պիտի ապրեցնի ու պահի Հայաստանը: Ուրախ եմ, որ գալիս է մի սերունդ, որը թույլ չի տալու ոտնահարել մեր ազգային արժեքները»:

Սամվել Մարգարյանը, վստահեցնելով, որ հայ գրողները տասնամյակներ շարունակ եղել են մեր ազգի առաջամարտիկները, հորդորեց միասնական ուժերով նպաստել գրողի հեղինակության, գրականության և գրքի դերի ու նշանակության բարձրացմանը:

Շաքե ԵՐԻՑՅԱՆ

### ԳԻՐԹ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

Ավանդույթ դարձած տոնը՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը և 2008 թվականից ի վեր Հայաստանում նշվող Գիրք նվիրելու օրը, Շիրակի մարզային գրադարանում միասին նշելու էին եկել շիրակցի գրողները: Ներկա էին նաև Շիրակի մարզի Հացիկ գյուղի Վիքի ակումբի անդամները (ակումբի համակարգող՝ Լիլիթ Սուքիասյան):

Ողջույնի խոսքով հանդես եկավ գրադարանի տնօրեն Գ. Ամիրյանը՝ ընդգծելով ընթերցանության և օրվա խորհուրդի կարևորությունը: Վիքի ակումբի թումանյանասերները անդրադարձան մեծ Թումանյանի ստեղծագործական և հասարակական գործունեությանը, հանճարեղ լոռեցու քառյակներին:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Ա. Կարապետյանը, ներկայացնելով գրողներ Արմենուհի Միսիթարյանին, Հակոբ Մուշին և Մաացական Մուրադյանին, հպարտությամբ շեշտեց, որ բոլորն էլ 2020 թ. արժանացել են հանրապետական մրցանակների: Վերջիններս կարդացին իրենց ստեղծագործություններից և գրադարանի նվիրեցին մրցանակի արժանացած նորահրատ գրքերից: «Վերնահարկ» սրահում ներկա գտնվող հյուրերը, ընթերցասերներն ու աշխատակիցները ևս միմյանց գրքեր նվիրեցին:

Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

### «ԱՅՆՊԵՍ ԱՊՐԵՆՔ, ՈՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԳԻՆ ՓԱՌԱՎՈՐՎԻ»

Փետրվարի 19-ին՝ Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը, մարդաշատ էր Թումանյանի՝ Դսեղի տուն-թանգարանի բակը: Բանաստեղծի 152-ամյակին նվիրված միջոցառումը մեկնարկեց նրա հուշարձանի մոտ: Հուշարձանին ծաղիկներ խնամարկեցին Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը, Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Մանվել Միկոյանը, գրողներ ու մտավորականներ: Գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ներկաները մուտք վառեցին և հոգևոր հովիվ տեր Գրիգորիս քահանա Դերմենջյանի հետ միասին աղոթք բարձրացրին առ Աստված: Ապա նրանք ծաղիկներ դրեցին նաև տուն-թանգարանի բակում կառուցված հուշարձանին, որտեղ թաղված է բանաստեղծի սիրտը: Տուն-թանգարանի բակում հանդիսությունն սկսվեց Դսեղի միջնակարգ դպրոցի աշակերտների պարով, Թումանյանի ստեղծագործությունների ասմունքով, «Ա՛յն, ինչ լավ են սարի վրա» (երաժշտության և բառերի հեղինակ՝ Հ. Թումանյան) և այլ երգերի կատարմամբ: «Թումանյանի ստեղծագործությամբ սերունդներ են կրթվել ու դաստիարակվել: Թումանյանը մեր ամենօրյա ուղեկիցն է և ուղեկցելու է նաև նոր սերունդներին», - ասաց մարզպետ Ա. Խաչատրյանը՝ ջերմորեն շնորհավորելով դստեղիներին և բոլոր ներկաներին՝ հորդորելով Թումանյանի գիրքը սեղանի գիրք դարձնել: «Անչափելի է Թումանյանի գրական, հասարակական, պետականաշահ գործունեության արժեքն ու կարևորությունը: Պիտի կարողանանք այնպես ապրել, որ Թումանյանի հոգին փառավորվի, որ արժանի լինենք մեր մեծերի ժառանգությանը», - ասաց Մ. Միկոյանը: Նա խոսեց 2009-ին ՀԳՄ երջանակահիշատակ նախագահ Լևոն Անանյանի նախաձեռնությամբ փետրվարի 19-ը Գիրք նվիրելու օր հռչակելու մասին և գրքեր նվիրեց տուն-թանգարանին: Փոխադարձաբար գրքեր նվիրեցին և ստացան նաև մարզպետ Ա. Խաչատրյանը, բանաստեղծուհի Լենա Անթառնայանը, ուրիշներ:

Օրհնության խոսք ասաց և ներկաներին Թումանյանով ապրել հորդորեց Դսեղի եկեղեցու հոգևոր հովիվ տեր Գրիգորիս քահանա Դերմենջյանը: Միջոցառումը վարում էր Վանաձորի պոեզիայի թատրոնի արտիստուհի Հրաչուհի Լոռեցյանը: Տուն-թանգարանի երկրորդ հարկում տեղի ունեցավ Համազգային հայ կրթական և մշակութային միության կողմից հրատարակված Վարդգես Ահարոնյանի «Աղբյուրակ. մարդը և ռազմիկը» և Ավետիս Ահարոնյանի, Վարդգես Ահարոնյանի «Բաճիկի Բաճիկի կյանքը» գրքերի շնորհանդեսը: «Թումանյանը մեր ազգային մեծությունն է և համամարդկային արժեք: Մենք պիտի հպարտանանք, որ աշխարհին Թումանյան ենք տվել: Ամեն ազգ նման մեծություն ունենալու շնայություն չունի», - ասաց Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, արձակագիր, բան. գիտ. թեկնածու Կարո Վարդանյանը:

Համազգային հայ կրթական և մշակութային միության ներկայացուցիչ, արձակագիր Սպարտակ Ղարաբաղցյանն էլ ասաց, որ Դսեղը բոլոր հնարավորություններն ունի դառնալու այնպիսի սրբավայր, ինչպիսին այսօր Յասնայա Պոլյանան է՝ շնորհիվ Լև Տոլստոյի: Մեր իշխանություններն ու մենք ամեն ջանք պիտի գործադրենք այս ուղղությամբ: Նա պատմեց, որ ԽՍՀՄ-ի նավատորմում Թումանյանի անվան նավ կար, որը հաց էր բաժանում: Ասաց, որ պատահական չէ Թումանյանի անվան նավով հաց բաժանելը. նրա գրականությունն էլ հոգևոր հաց է, նշխար: Խոսք ասաց նաև Համազգային հայ կրթական և մշակութային միության ներկայացուցիչ Ռուզան Առաքելյանը: Միության անունից նրանք տուն-թանգարանին նվիրեցին հիշյալ գրքերը:

Հովհաննես ՍԱՐԴԱՐՅԱՆ

## Գևորգ ՔՐԻՍՏԻՆՅԱՆ

Ժամանակի, միջավայրի և մարդու փոփոխականացման, հարաբերության մակարդակներում ձևավորվում են համընդհանուր, ինչպես նաև անհատական գաղափարներ, գեղագիտական ըմբռումներ ու ճաշակ, ոճական առանձնահատկություններ: Ինչպես ասում են՝ որքան մարդ, այնքան ճաշակ, հատկապես՝ ոճ: Համաշխարհային հին ու նոր գրականության խճանկարն այնքան բազմաշերտ է ու բազմագույն, որ մեր օրերի ոչ միայն ընթերցողը, այլև գրականագետն ու քննադատը չեն կարող և պատշաճ էլ չէ, որ ընդհանուր դեղատոմս տան՝ ում որ հարկն է: Այսօր նույնիսկ հարուստ ավանդություններով աչքի ընկնող հաստատություններն էլ խուսափում են միասնական մոտեցումներից: Եվ քանի որ ստեղծագործական ընթացքը գուտ անհատական երևույթ է, ապա նրա արգասիքը խորությամբ զգալու և գնահատելու համար անհրաժեշտ է ելակետ ունենալ՝ այդ ստեղծագործության մեջ երևացող հերոսը, անհատը, որն անհատականացված, կերպավորված է ստեղծողի, նրան շունչ ու հոգի տվող գրողի, բանաստեղծի ձեռամբ, նրա ներշնչանքով: Ուրեմն, տվյալ պարագայում բանաստեղծի ստեղծագործության էության գաղտնիքը պիտի փնտրել նրա անհատականության մեջ: Սույն խոհերն անհրաժեշտորեն բխեցին բանաստեղծ Գրիշ Դավթյանի «Ափունքից ափունք» ժողովածուի մեջ ընդգրկված ստեղծագործություններին ծանոթանալիս: «Ափունքից ափունք» խորագիրը բնութագրական է: Գրքի առաջին բաժնում ընդգրկված բանաստեղծությունները («Երրորդ բուռ հող») բացահայտում են «Ափունքի» էությունը: Դա սփյուռքահայի, սփյուռքում ստեղծագործողի, իրոք, յուրահատուկ էությունն է: Կա մի հանգամանք: Յուրաքանչյուր անհատականություն ունի իր զգայական աշխարհն ու իր ճշմարտությունը: Այդ ճշմարտության լույսը կաթիլ առ կաթիլ յուրացվում է ստեղծագործական պրոցեսում:

Գրիշ Դավթյանը ստեղծագործական երկար ճանապարհ է անցել: Ինքնատիպ և հետաքրքիր մտքեր ու զգացումներ են ձևավորվել բանաստեղծի հայրենասիրական բավական երկարաշունչ գործերում: Հայրենիքի, ժողովրդի ճակատագրի և հողի վերաբերյալ նրա ըմբռումները մի տեսակ տարօրինակ ճշմարտություններ են, որոնք հատուկ են հայրենիքից հեռու, օտար երկիրների տակ ծնված ու մեծացած հային, հատկապես մտածող, ստեղծագործող հային: Մտորումների երկար, խորագրաց ու տանջալի հոսք է «Ձայն բարբառ... առ Հայաստան» բանաստեղծությունը, որի մեջ արծարծվում են սփյուռքահայի հոգին ու միտքը, զգացումները տանջահար անող հարցեր, խնդիրներ, դրամատիկական խոհեր: Հեղինակն ի վերջո փորձում է հաստատել, թե ինչ է իր համար հայրենիքը («Ո՞րն է Բաբո, մեր հայրենիք», Շիրազ): Հող չէ, ջուր չէ, օդ չէ, տուն չէ, սակայն, այնուամենայնիվ այդ ամենն է, որ հաստատագրվում է մտքով, զգացումով, ժառանգականությամբ, արյան կանչով, արյան գույնով, քջիջներով, և այս ամենը երևակվում ու քանդակվում են բառով ու խոսքով, անունով ու ազգանունով, բնագղով ու ենթագիտակցությամբ, պատմությամբ ու ներկայով:

*Եվ դրանով է իմաստ սրացել//Բարձր մեր լեզվին...// Ու գոյականը ոչ թե լոկ անուն...//Այլ հող է դարձել//Եվ գոյ է դարձել մեր անսփ սրբում...//Բարձր է երկիրը// Ու արև անշեջ...//Բարձր ձգտումի անսուր նպատակ...//Բարձր հայրենիք...//Բարձր Հայաստան...*

Բանաստեղծական մտորումների բեռը դրամատիկական շեշտադրումներով ծավալվում ու բացվում է իբրև մի դարավոր թնջուկ, որի ծալքերում թաքնված են հոգեբանական և հուզական հարցականներ: Ինչ են Հայաստանը, հայրենի հողը, հայրենի եզերքները սփյուռքահայի համար, նրա խոհերի ու զգացումների ծալքերում. ինչպես է նա հաղթահարել օտարության բազում ու բազմաձև ազդակները և մնացել հայ: Աշխարհաքաղաքական բազում խոչընդոտները դիմագրավելու խորհուրդը բանաստեղծը

համարում է հայի հաստատականությունը, անխախտ հավատքը, ժառանգած ավանդությունները, պատմության դասերը, պայքարի և մաքառումների դաժան փորձությունները:

*Հասկացել ենք մեր կարելիության//Սահմանն ու գիծը...//Ու թույլ չենք տրվել, որ մեր ճակատին//Քալի ժխտական սևաթույր բիծը...//Եվ դա, արդարև, չի եղել հեշտին:*

Ինքնահաստատման բազում կեղծանմաներով է անցել արտերկրի հայը՝ պահպանելով իր ինքնությունը, կյանքը, պատիվը, ապրելու իրավունքը: Գրիշ Դավթյանի հայրենասիրական բանաստեղծությունները ժամանակակից սփյուռքահայի հոգեբանական ու մտածական նորանոր շերտեր են բացահայտում, հաստատում ու ձևակերպում: Եվ այդ գործերը առանձնանում են ինքնատիպ մտածողությամբ, բովանդակության հարստությամբ, գե-

նակ», «Աստղավառ», «Հեշտաթով», «Սեզոնային», «Օրավոր»: Սույն շարքերի մի մասը վերջին տարիներին տպագրվել են մեր մամուլի էջերում: Գրիշ Դավթյանը սիրալեցուն քերթող է, անսպառ՝ ոգեղեն թավուտները պեղելու իր անդադրում կրթով ու իմաստային թևածումներով: Նրա մոտ գերակշռում են ազատ, ապիտակ տողերով քերթվածքները, ինչպես նաև դասական չափ ու կշռի, հանգավորման զանազանակերպ դրսևորումները: Գրիշ Դավթյանի քնարական հերոսը ընթերցողին է ներկայանում իր ջինջ ու պայծառ զգացումներով, ժամանակակից մարդուն հատուկ հոգեբանությամբ, ավելի քան ազատ ու անկաշկանդ՝ պահպանելով չափի զգացումը և գեղեցիկի, բարոյ և հավերժական սիրո թարմությունը: Թերևս կերպավորման և գեղագիտական առումով նորովի են հնչում հատկապես «Սեզոնային» բաժնում գետնելված քերթվածքները: Բնության, բնական

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԿԵՐՊՆ ՈՒ ԳՈՒՅՆԸ

ղարվեստական մատուցման ժամանակակից ձևերով, լեզվաճական միանգամայն ինքնահնար կառույցով, որ չես կարող շփոթել. իր մտածումն է, իր բառերն են, իր պատկերային շարքն է՝ բարդ վերամբարձությունից մինչև պարզությունն ու առօրեականը: Շարակարգի մեջ սպրդում են բառեր ու արտահայտություններ, որոնք առաջին պահ թվում են անհասանելի, գրքային կամ բառարանային, հնացած, որոնց մասին երբ խորհում ես, զգում ես, որ դրանք, այդ բառաթերքը բանաստեղծի կողմից յուրացված ու մարսված են և օգտագործված են տեղին:



երևույթների ընկալման ու կերպավորման վաղուց մոռացված դուրյանական խորհուրդը զգացի նշված շարքի ստեղծագործություններում: Դա սիրած էակի բարեմասնություններով բնության երևույթները՝ արևը, լուսինը, լճակը, վարդը, շուշանը ավելի գեղեցիկ ու թովիչ դարձնելու, ավելի հմայիչ տեսնելու բանաստեղծի ձգտումն է:

Սա հայ բանաստեղծության դասական բարեմասնությունների վերականգնման, խորացման, սքանչացման աղերսն է, որ միավորում, միահյուսում է մարդկային հոգու և բնության սքանչելիքները: Ահա «Գարունը» գեղեցիկ քերթվածքը:

*Դու գալիս ես նրա քայքայվ սեթևեթ.../որ ճկում է մեջքը վրիպ/ու խոսասփում է իմ գրկից.../որպես անպը, որ փարում է լուսնյակին.../բայց սայթաքում է մահիկից.../ու կուրակվում է//հոնքերիս մութ մոայլությամբ երազկուր:*

Այդ շարքի լավագույն բանաստեղծություններից են՝ «Անունն աշուն է», «Բոնկված ամառ», «Գարուն», «Հասունություն», «Գարունը աղջիկ է», «Ձմեռային», «Աշնան տերև», որոնց տողերում կենդանանում են ոչ միայն բնության բարիքները, այլև մարդը, սիրած էակը: Ընդհանրապես Գրիշ Դավթյանի սիրերգությունը աչքի է ընկնում ժամանակակից մտածողության բազմալար շերտերով, համարձակ ու ազատ խոյանքով, կյանքի թարմացման ու գեղեցկացման գունային ու նկարչական պատկերավորությամբ: Առանձնահատուկ է Գրիշ Դավթյանի բանաստեղծական պատկերավորման մեթոդը: Այն ավելի քան շոշափելի է և կենդանի, երբեմն կոշտ ու տեսանելի, քան եթերային, որ առաջին պահ կարող է շփոթեցնել ընթերցողին: Այսպես.

*Լուսինը խոսարացավ միշտ նորել.../Եղջյուրի հեասանած սուր շեղքով//Գիշերվա մոռթը փսոթել...*

Նրա «շեղքն» ու «մոռթը» կարող ես ընդունել կամ մերժել: Սակայն ուշադիր և կրկնակի ընթերցմամբ կարող ես հայտնաբերել դրանց բանաստեղծական ճշմարտությունը, որը ինքնատիպ է և գուտ դավթյանական: Մի խոսքով, մենք գործ ունենք իր բանաստեղծական աշխարհը ինքնայրումով կերտած անհատականության հետ, որը մարդն ու նյութական աշխարհը ընկալում է պարզ, գոյապաշտական սկզբունքներով:

# Իսլամական հեղափոխությունից հետո ստեղծված Իրանի ժամանակակից գրականություն

## Հատվածներ իրանցի արձակագիր Մոհամմադ Ռեզա Յուսեֆիի «Ձիերը» մանկական գրքույկից

### Իմ նկարչությունը

Ես նկարեցի մի ձի,  
 Նրա շուրջը շրջողը ցանկապատեցի և ասացի.  
 - Սա քո ախոռն է, այստեղից դուրս չգաս:  
 Սակայն ձիս չլսեց ինձ և թողեց գնաց: Ես խիստ վրդովվեցի և ցանկապատը ջնջեցի:  
 Հիմա դուք ո՞չ ձիուն եք տեսնում, ո՞չ էլ ցանկապատը:  
 Ես էլ այնտեղ չեմ: Գնացել եմ ձիուս որոնելու:  
 Եթե ձեզ այդպիսի նկարչությունը դուր է գալիս, ապա այն փակցրեք ձեր սենյակի պատին և անվանեք՝ «Աղջիկը, որը փնտրում է իր ձիուն»:  
 Եվ, վստահ եղեք, նրանք, ովքեր ատում են ախոռն ու ցանկապատը, շատ լավ կտեսնեն նկարը և հաճույք կստանան դրանից:

### Ախոռը

Նախ ես նկարեցի մի գուռ:  
 Ապա նրա մեջ ձի նկարեցի:  
 Հետո ինձ նկարեցի ձիու կողքին:  
 Ձին հանկարծ խրխնջաց ու փախավ:  
 Հայրս ասում է՝ ախոռ կառուցելը դժվար է, չի կարելի այն քանդել:  
 Մայրս ասում է՝ ախոռն արժեք ունի, չլինի թե հանկարծ քանդես:  
 Հիմա ախոռում միայն ես եմ մնացել:

### Կարճ մի խրխնջ

Ձիերն ապրում են հանգիստ:  
 Նրանք էջի պես չեն զռում:  
 Նրանք չեն մռնչում առյուծի նման:  
 Նրանք կովի պես չեն բառաչում:  
 Ձիերը մի պահ խրխնջում են՝  
 Այդ է նրանց պանքը...  
 Ապա մեռնում են:  
 Ընդամենն այսքանը... և վերջ:

### Ծեր ձին

Ծեր ձին ողջ այնպե՞ս բեռ էր կրել, հեծյալ տարել մեջքին՝ շատ էր տանջվել:  
 Ծեր ձիու միակ գեղեցիկ հուշն այն օրվա մասին էր, երբ նրա վրա հարսին էին նստեցրել և տանում էին փեսայի տուն:  
 Ծեր ձին ճանապարհ ընկավ: Մայրուղիները, փողոցներն ու հրապարակները հոտոտելով գնում էր:  
 Ձեր ձին գնաց, հասավ այդ հարսի տան մոտ և նստեց դռան դիմաց:  
 Արևը մայր մտավ, ապա ծագեց, և հարսը տանից դուրս եկավ:  
 Ձին հայացքը հառեց հարսին, ցավալիորեն ու խոր ախ քաշեց, տեղից վեր կացավ ու բարձրաձայն խրխնջաց:  
 Հարսը հիշեց ց հարսանիքի օրը և ծեր ձիու խրխնջը:  
 Երկուսն էլ ծերացել էին:  
 Ծերացած հարսը նստեց ծեր ձիուն: Իսկ ծեր ձին, երիտասարդ օրերի նման, սլանում էր:

### Բարեկամ

Մի բանաստեղծ իր բարեկամի մասին գրեց.  
 Նա շատ սիրալիր է:  
 Նա շատ ազնիվ է:  
 Նա շատ սիրուն է:  
 Նա շատ համեստ է:  
 Ապա բանաստեղծը ջնջեց բոլոր բառերը և գրեց.  
 «Ձի անունով մի բարեկամ»:

### Ամենահարուստը

Ամենագեղեցիկ ձին ասաց.  
 - Իմ բաշն ավելի գեղեցիկ է, քան առյուծինը:  
 Ոտքերս ավելի սլացիկ են, քան եղնիկինը:  
 Աչքերս ավելի մեծ են, քան եղջերուինը:  
 Հասակս բարձր է բոլոր ձիերից:

Էլ ինչո՞ւ մի էջ պետք է հեծնի ինձ:  
 Սակայն այդ էջն աշխարհի ամենահարուստ էջն էր:

### Երազանքներ

Իշատերն իր ավանակին ասում էր. «Իմ գեղեցիկ ձի: Իմ ազնվական ձի: Իմ համբերատար ու հնազանդ ձի...»:  
 Ավանակն ասաց. «Ես ավանակ եմ, դու ինչո՞ւ ես ինձ ասում իմ ձի»:  
 Իշատերն ասաց. «Ես իմ երազանքների հետ եմ խոսում»:  
 Հաջորդ օրը էջն ախոռում սատկել էր:  
 Իսկ իշատերը, գոհ պես զռալով, վազվզում էր քաղաքի փողոցներով:

### Թևավոր ձին

Ձին տեսավ, որ մարդիկ քարի վրա թևավոր ձի են փորագրել:  
 Ձին տեսավ, որ մարդիկ կտավի վրա սպիտակ թևավոր ձի են պատկերել:  
 Ձին տեսավ, որ մարդիկ իրենց վերնաշապիկներին թևավոր ձի են նկարել:  
 Ձին տեսավ, որ մարդիկ թևավոր ձիու մասին գեղարվեստական ֆիլմ են նկարահանել:  
 Ձին գնաց և մեջքին երկու մեծ, սպիտակ թևեր կապեց:  
 Ապա բարձրացավ լեռան գագաթը և այնտեղից թռավ:  
 Ձին ընկավ անդունդը, և նրա ձեռքերը, ոտքերը, մեջքն ու դունչը ջարդվեցին:  
 Այդ ժամ ձին հասկացավ, որ ձիերը չեն թռչում, սակայն մարդիկ դեռևս չեն հրաժարվում իրենց երազանքից:

### Ոսկյա ձին

Մի ոսկյա ձի.  
 Ոսկյա թամբով,  
 Ոսկյա սանձով,  
 Ոսկյա դնչկալով,  
 Ոսկյա գրահով,  
 Ոսկյա ասպանդակով:  
 Ապա բերեցին ոսկյա մի սանձ,  
 Որպեսզի թագավորը հեծնի:  
 Թագավորը զարմացած նայեց ոսկյա ձիուն,  
 Ապա դրեց ուսերին ու ճանապարհ ընկավ:

### Ձայն

Ձին ու էջը սիրահարվեցին և շատ շուտով ամուսնացան:  
 Որոշ ժամանակ անց նրանք մի քուռիկ ջորի ունեցան:  
 Ձին ասաց. «Քուռիկս պետք է ինձ նման խրխնջա»:  
 Էջն ասաց. «Ո՛չ, իմ քուռակը պետք է ինձ նման զռա»:  
 Նրանք գտնվեցին, միմյանց զույգ ոտքերով աքացի տվին, իսկ քուռակն ասաց.  
 «Նանի ջան, ապի ջան, մի՛ կռվեք, ես թե՛ խրխնջում և թե՛ զռում եմ»:  
 Այնպես եղավ, որ ջորին թե՛ խրխնջաց և թե՛ զռաց:  
 Սակայն երբ մեծացավ,  
 Չհասկացավ, թե որն է իր ձայնը: Այդպես ընդմիշտ կորցրեց այն:

### Անհեծնելին

Կար մի ձի, որը չէր ուզում՝ որևէ մեկը հեծնի իրեն:  
 Այդ ձին փախավ դեպի դաշտ ու անտառ, սար ու ձոր:  
 Մի օր գայլերի ոհմակը հարձակվեց նրա վրա:  
 Ձին վազում էր, գայլերը՝ նրա ետևից:  
 Սև ու գորշ երկու գայլ թռան և հեծան նրան,  
 Իրենց սուր ատամները խրեցին ձիու վիզն ու գավակը:  
 Ձին խրխնջաց, զույգ ոտքերով աքացի տվեց, ծառս եղավ,  
 Մարմինը թափահարեց և գայլերին ցած գցեց,  
 Ապա խաղաղությամբ պառկեց գետնին:  
 Նա միակ ձին էր, որի վրա ոչ ոք չէր նստեց:

## Գյարուս Աբդուլմալեքյան

### Բանալին

Մնացել է սրճարանի սեղանին  
 Տղամարդը  
 Տան դիմաց գրպաններն է քրքրում  
 Ապագան  
 Մնացել է անցյալում

### Ժամանակ չկա

Արի իրար գրկենք  
 Վաղը  
 Կամ ես քեզ կսպանեմ  
 Կամ դու դանակդ ջրի տակ կլվանաս  
 Հենց այս մի քանի տողը  
 Աշխարհն ամփոփվում է այս մի քանի տողով  
 Եվ այն բանով, թե մարդը  
 Ավելի լավ է փոքր մնա, թե՛  
 Ավելի լավ է չծնվի  
 Ավելի լավ է այս ֆիլմը ետ պտտացրու  
 Այնքան ետ, որ ցուցափեղկի ետևի մուշտակը  
 Հեռավոր դաշտերում վազող հովազի վերածվի  
 Այնքան ետ, որ ձեռնափայտերն իրենց ոտերով  
 Անտառ վերադառնան

### Մոռացիր

Ինքնաձիգը  
 Մահը  
 Եվ խորհիր այն մեղվի մասին  
 Որ ականապատ դաշտում  
 Ծաղիկներ է որոնում:

Պարսկերենից թարգմանեց  
 Աշխեն ՄԱԿԱՐՅԱՆԸ

## Ղեյսար Ամինփուր

### Մշտական կարոտը

Մեր խոսքերը դեռևս անավարտ...  
 Հենց որ նայում ես  
 Պահն է գնալու  
 Դարձյալ նույն  
 Հեքիաթը մշտական  
 Նախքան գլխի ընկնելը  
 Անխուսափելի է դառնում քո մեկնելու պահը  
 Ով...  
 Ով ավաղ և կարոտ մշտական  
 Հանկարծ  
 Որքան շուտ  
 Ուշ է լինում

### Լարախաղացը

Հենվել եմ քամուն  
 Հասարակածային ձեռնափայտովս  
 Կանգնել եմ  
 Երկնքի պարանին  
 Հանկարծի զույգ անդունդի եզրին  
 Հանկարծակի ձայնից  
 Հանկարծակի լռությունից  
 Իմ ոտքի տակ  
 Բաց է մնացել  
 Գահավիժման անդունդի բերանը  
 Ստիպված  
 Լռության ձայնով  
 Մինչև մշտապես  
 Քայլում եմ  
 Զույգ անդունդների քավարանի վրա  
 Իմ ճակատագիրը երգելն է

Պարսկերենից թարգմանեց  
 Էմմա ԲԵԳԻՋԱՆՅԱՆԸ

Պարսկերենից թարգմանեց  
 Էդուարդ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԸ



Հրաչ ԲԵՂԱՐՅԱՆ

Նվիրում եմ եղբորս՝ Բենյոյին

Աշունը եկավ երկար սպասված սիրո նման: Եկավ փափուկ, խորհրդավոր ժպիտը դեմքին և թեթև քայլերով մոտեցավ խորհրդային ռազմաբազային: Ասենք այն ժամանակ դա ռազմաբազա չէր կոչվում: Ինչ էր կոչվում, ո՞չ Ավագը գիտեր, ո՞չ էլ այնտեղ ծառայող տարբեր ազգերի պատկանող հազար երեք հարյուր զինվորներից որևէ մեկը: Գիտեին, որ իրենք բանակում են և այստեղ են բերվել եղբայրական մոտոլո ժողովրդին պաշտպանելու համար: Ումի՞ց էին պաշտպանելու, իրենք չգիտեին: Գիտեին ուղարկողները: Ինչպե՞ս էին պաշտպանում. վազում էին, խրամատ էին փորում, կրակում էին և եթե կարողանում էին՝ գլուխ էին պահում, քանզի լավ գիտեին, որ լավ ծառայելիս թե վատ՝ տարբերությունը ծնողներին ուղարկած թղթի կտորն էր լինելու, որ «Շնորհակալագիր» անունն ուներ:

Աշունը եկավ աննկատելի, Գոթի անապատից փչող խորշակը անհետացավ, ասես երկինքը կապույտ գանգի նման կախվեց վերևից, և օդը՝ չոր ու զրնգուն, թափանցիկ ու մաքուր, ժպտաց հանկարծ կողքից հայտնված անծանոթ ու սիրուն աղջկա նման:

Ավագը այժմ հառեց առավոտյան երկնքին, մտքում մի անգամ էլ հիշեց, որ այսօր իր ծննդյան օրն է և սրտի մեջ հաճելի խլրտուն գգաց: Բանակում ընդունված օրենք էր, թե իրենց հրամանատարն էր այդպես կամեցել, կարևոր չէր: Կարևորն այն էր, որ զինվորն իր ծննդյան օրը արձակուրդ էր ստանում: Ճիշտ է, կարճատև, ճիշտ է, մեկօրյա, բայց արձակուրդ: Սրտի մեջ տաք ու բարախուն մի ուրախություն էր բույն դրել այսօր և այդ ուրախությունն արձագանքում էր սեպտեմբերյան՝ ականջին դեռևս չսված խոսքեր փսփսացող թափանցիկ առավոտվա մեջ:

Նայեց երկնքին և մտքում հակառակվեց ռուս ժենյային: Չի կարող պատահել, որ այս պայծառ երկինքը, երկնքին այսքան սազող, առավոտվա օդը գուրգուրող արևն ինչ-որ մեկը ստեղծած չլինի: Գիտե՞ր՝ շուտով արևը կբարձրանա ու կլինի գենիթում, գիշերվա ընթացքում սառած օդը կտաքանա, և արևը անձեռակերտ զանգի նման կողողանալիս աշխարհի վրա:

Երկու օր առաջ էր՝ Խորհրդային Միությունից ստացված բեռներն էին բեռնաթափում: Հիմնականում տակառներ էին: Սկզբում գլորում էին հենց այնպես, առանց հետաքրքրվելու, թե մեջն ինչ է, հետո տակառներից մեկի կափարիչը թուլացրին ու տեսան՝ թթու դրած վարունգ է: Վրա ընկան ու սկսեցին ուտել: Վարունգ էր, սովորական թթու դրած վարունգ, բայց համով էր: Երևի գողացած էր դրա համար էր

այդքան համով, թե իրենք էին երիտասարդ ու առողջ: Դատարկեցին մինչև կեսօր, մինչև որ...

Այդ մեծ արկղը թաթար Այրաթը հայտնաբերեց: Կանգնել էր վազոնի մեջ, արկղի կողքին, բարակ հոնքերն իրար էր բերել ու զարմացած նայում էր: Հետո տառերը մի կերպ իրար կապեց ու կարդաց՝ ավինինա: «Թյոն», թթեց մտքում: Ինքը կյանքում խոզի միս չէր կերել՝ հարամ էր: Մահմեդականը խոզի միս չպիտի ուտի: Նայում էր արկղին ու չէր իմանում անելիքը, մինչև որ ժենյան հայիցեց, թե ինչ էս լավել, կանգնել, գործ արա: Ու Այրաթը մատը մեկնեց դեպի վազոնի անկյունը, ասես արկղի փոխարեն օձի նքողնակ էր բնադրվել այնտեղ:

- Ինչ է,- գայրոյթը զայելով ասաց ժենյան, հետո մյուսները եկան ու տեսան արկղը:

- Հաստատ ինչ-որ մեկը սխալ-

Դարոց չեն գնացել, չգիտեն, որ կրոնը մարդկանց խաբելու համար է: Մարդ առանց Աստծու էլ վատ չի ապրում: Տեխնիկայի դարում... Իսկի Գագարինը Աստծուն չի տեսել:

- Է, նեն,- ծոր տվեց Այրաթը, բայց կան հակաճանդ չէր ուզում, կան խոզի պահածոն շատ ախորժաբեր էր, կան քաղցած էր շան պես ու ծոր տվեց,- Է, նեն: Ասենք չէր ցանկանում բանավիճել զինվորական ծառայությունից կոշտացած տղերքի հետ, վախենում էր իր խոսքերին ավելի անպատիվ բառերով պատասխանեն, չէր կարողանում իր Աստծուն պաշտպանել ու մզգում էր:

- Ա՛ո, կեր,- մսի մի կտոր նրան մեկնեց Ավագը,- քո Ալլահը էսօր քեզ կների: Համ էլ միս ուտելուց կամ չուտելուց Աստծուն ինչ: Նրա համար մեկ չէ, թե դու ինչ կուտես:

- Նեն,- էլի մզգաց Այրաթը,

# ԾՆՆԳՅԱՆ ՕՐԸ

վել է, թթու դրած վարունգի հետ նաև մի արկղ խոզի մսի պահածո է բարձր վազոն,- ասաց քյավառցի Ռուբոն: Ավագը նայում էր նրա կիսադեմին ու զարմանում նրա քթի մեծության վրա, ասես առաջին անգամ էր տեսել:

Ժենյան ու մյուսները մտածում էին: Ավագը կանգնել էր այժմ պահածոների արկղին ու ձայն չէր հանում: Տվեցին-առան ու որոշեցին, որ դա բախտի պես բան է, հատուկ պարզել իրենց դժվար աշխատանքի համար: Արդեն չի հիշում, թե Ռուբոն ինչպես բացեց արկղը և պահածոյի տուփերը տեսնելով՝ գոմոաց.

- Խամ, էլի:

Ու ամեն մեկը վերցրեց՝ որքան կարող էր: Երեք տուփ էլ Ավագին հասավ: Տուփերը բացվեցին արագ: Բացի չկամ, հետո ինչ: Զինվորական գոտու ճարմանդ կար, քար կար, երկաթ կար... Այրաթը կանգնել, նայում էր: Նրա բարակ, երկար ստվերը երկարել, ձեռնակ էր վազոնի կողքին ու ստվերի մեջ նույնպես Այրաթը տարակուսած էր, կամուկացի մեջ:

- Դու ինչի՞ չես ուտում, խոզի մսի յուղոտ կտորը ծամելով հարցրեց ժենյան:

- Խոզի միս է,- ասաց Այրաթը:

- Հի-հի,- ժենյայի ծիծաղը յուղոտ էր, տարածվում էր պեպենտո երեսի վրա, չէր հավաքվում, ձայնը կոկորդի մեջ կլկլում էր մի տեսակ ու մսի կտորների խառնված ներս էր լցվում, դուրս գալու փոխարեն,- ո՞վ չգիտի, որ խոզի միս է: Դե մենք էլ խոզի միս ենք ուտում, էլի:

Այրաթը հոգոց հանեց: Հաստատ տղերքը չգիտեն, որ ինքը մահմեդական է ու խոզի միս չի ուտում: Չխոսեց, թախծոտ նայեց և թուքը կու տվեց: Մասները երկար, բարակ, ծանր գործ չարած մարդու մատներ էին, անմծում էին տիրոջ երեսն ու մի տեղ կանգ առնել չէին կարողանում: Ռուբոն գլխի ընկավ:

- Կարող է Ալլահը չի թողնում,- ձեռ առավ:

- Ը՛, ո՞նց ասեմ,- ծոր տվեց Այրաթը:

- Ա՛յ տղա, դու չգիտես, որ էս լուսավոր դարում Աստված չկա,- նորից ասաց ժենյան,- խորհրդային երկրում էլ ինչ Աստված: Դու հո պառավ չես:

բայց Ավագը տեսավ, թե նրա կոկորդը ո՞նց է թրթռում: Թուքը կու էր տալիս ու նայում էր մսի կտորին:

- Ա՛ո, քո մեղքը թող ինձ վրա լինի,- խրխնջաց Ավագն ու մսի կտորը մոտեցրեց նրա շուրթերին:

Այրաթը մի անգամ էլ նայեց մսին, այժմ երկինք հառեց ու բացեց բերանը: Միսը համով էր: Հավում էր բերանի մեջ: Կերավ այդ մի կտորն ու էլի ուզեց: Բացեց պահածոյի տուփը և կերավ առաջ շուրջը նայելու: Մի տեսակ երկվություն կար նրա հոգում: Միսը համով էր, ինքը՝ քաղցած, բայց խիղճը մզգում էր բարակ մի ցավից, ու ամեն պատահի հետ մի քիչ ավելի էր ծանրանում հոգին: Փորձում էր ինքն իրեն համոզել, թե մի պահածո ուտելով աշխարհում որևէ բան չի փոխվի, բայց չէր կարողանում: Ուտում էր ու ամեն պատահի հետ անբառ հանդիմանանք էր թափում սեփական անձի վրա: Տղաներն ուտում ու ծիծաղում էին, ուտում ու հայիցում էին:

- Գյս, դու Աստծուն հավատում ես,- Ռուբոն բերանը սրբելով հարցրեց Ավագին:

Ավագը մտածեց, պատասխանը չգտավ ու վեր քաշեց ուտերը.

- Ես չեմ:

Հիմա նայում էր աշնան պայծառ օրվան, մտքով ըմբռնվում իր ծննդյան օրվա ազատությունն ու զարմանում էր օղի մաքրության, երկնքի կապույտի, տափաստանի անձայրածիր ազատության վրա: Ինչ-որ միտք գլխի մեջ տրոփում էր, թե այս ամենը հենց այնպես պատահականորեն ստեղծված չի կարող լինել: Ամեն ինչ ինչ-որ մեկը ստեղծում ու հորինում է, չէ, ուրեմն այս ամենը նույնպես ինչ-որ ստեղծող պիտի ունենա:

Միտքը գլուխն էր եկել իրենից անկախ: Ոչ այն է դրան սովորեց, ոչ այն է նման անծանոթ ու խորթ մտքից ուղեղը ծանրացավ ու գլուխը թափահարեց դրանից ազատվելու համար: Առավոտը մաքուր էր, օրը՝ բազմախոստում: Երկար ժամանակ փող էր հավաքել էս օրվա համար և իրիկվա կողմ տղերքին քաղաք է տանելու: Հրամանատարը թույլ է տվել, որ չորս հոգով գնան քաղաք՝ իր ծնունդը նշելու:

Գիտե՞ր ում պիտի հրավիրե՞ր՝ Ռուբոյին, որպես իր հետ ծառայող հայ,

ժենյային, որպես ընկեր, երրորդ մարդու վրա կասկածում էր: Չգիտե՞ր Այրաթին հրավիրե՞ր, թե ուկրաինացի Օլեգին: Այրաթը լավ տղա էր, հետո ինչ, որ մահմեդական էր, հետո ինչ, որ խոզի միսը գոռով կերավ և ամեն բանի մեջ Ալլահի կամքն է տեսնում, իսկ Օլեգը... Օլեգն էլ էր լավ տղա, բայց ինքն էնքան էլ մոտ չէր հետը: Մինչև ազատման թերթիկ լրացնելը տարակուսում էր, հետո ինքնաբերաբար Այրաթի անունը տվեց:

Քաղաք գնացին ոտքով: Զորամասից կես ժամվա հեռավորության վրա էր: Իսկ կես ժամ քայլելի իրենց համար ինչ էր: Ժենյան գնդապետ Բոյկոյի նման էր փորձում քայլել: Փորձում էր շարային քայլը կատարել ու չէր կարողանում: Բոյկոն խիստ, ձիգ, պինդ, զինվորականի մարմնով վարժահրապարակում մեկ-մեկ ցուցադրական քայլ էր կատարում: Բոլորը հիանում էին, փորձում ընդօրինակել ու չէին կարողանում: Հիմա ճանապարհի վրա Ռուբոն էր փորձում Բոյկոյի նման քայլել, բայց հաշվի չէր առնում, որ իր կարճ հասակի ու ծուռ ոտքերի պարագայում...

Ավագը նայում էր նրան ու ծիծաղում էր՝ փորը բռնած:

- Ծիծաղում ես,- վիրավորվում էր Ռուբոն,- դե դու քելա:

Ավագը փորձում էր ոտքը վեր բարձրացնել, ծիծաղից թուլանում էր ու քիչ էր մտում պատկեր փոշոտ ճանապարհի վրա:

Գնում էին կատակելով, գնում էին ամեն մեկն իր իմացած ռուսերենով ինչ-որ բան պատմելով: Հետո ինչ, որ խոսքը կիսատ-պոատ էր, հետո ինչ, որ բառերը հաճախ չէին հերիքում: Կարևորն այն էր, որ իրար հասկանում էին կես խոսքից, կես հայացքից: Երբ սրվել էին հարաբերությունները Չիսաստանի հետ և իրենք սահմանի մոտ գործարժություններ էին անում, էլի իրար հասկանում էին կես խոսքից: Խորհրդային զորքերն իրենց ուժն էին ցուցադրում: Զորամասում եղած հինգ տանկը հակառակորդին տասն անգամ շատ ցույց տվեցին: Տանկը գնում էր, անցնում բլրի հետևը և նորից ետ էր գալիս: Բլրի հետևում տանկը կանգ էր առնում, վրացի Լևանը սպիտակ ներկն ու վրձինը ձեռքին սպասում էր: Արագ բարձրանում էր տանկի վրա, ջնջում էր մի քիչ առաջ գրած համարն ու տեղը մի այլ համար էր գրում: Տանկը մի քիչ առաջ տասներորդ համարն էր, հիմա դառնում էր տասնհինգերորդը: Թող չինացին հեռադիտակն այժմերին հաշվի ու հաշվի: Խորհրդային հինգ տանկը գնդապետ Բոյկոն տասն անգամ պատեց բլուրի շուրջը և... Իրենք նախ զարմացել էին, հետո հասկացան հրամանատարի խորամանկությունը:

Բայց թե իրենց ինչ: Իրենք շարքային զինվորներ էին, մի ազատ օր էին ստացել, սրճարան գնալու թույլտվություն ու գնում էին:

Զինվորական կոշիկների հետքը մտում էր ճանապարհի փոշու վրա: Ռուբոն քայլում էր ոտքերը քստացնելով, ու ճանապարհի դեղին փոշին ելում նստում էր փայլեցրած կոշիկների վրա: Ժենյան որքան էլ փորձում էր զգույշ քայլել, չէր ստացվում ու մեկ-մեկ խեթ նայում էր Ռուբոյի կողմը: «Համ, տղեն ինչ անի, որ ոտքերը ծուռ են»,-

**Հակոբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ**

*Հրաժարվում եմ շարք սակոց,  
Որպեսզի գոնե սակավին հասնեմ  
Բավարարելով ամենապիկար  
ին կարողությամբ:  
«Մատյան ողբերգության», Բան ԼԸ, Բ*

Հակոբ Հարությունի «Ծաղկե մկրտություն» բանաստեղծությունների ժողովածուն (Եր., «Վան Արյան», 2018 թ.) միտք - զգայական հոգեվիճակից անհանգստացրած իմաստասիր է՝ մենախոսություն, որ վկայում է ես-ի ու դու-ի երկխոսությունը՝ իբրև տիեզերական աշխարհի ենթամոդուլ: Այն տեսանող ու ընկալող գրչի հայացք է, ունակ՝ իրական ու երևակայական նյութի դիմադրությունը հաղթահարելու կամ շրջանցելու և նույն երանգներով վերակերտելու սովորականը արտառոց՝ ասոցիացիաների փոխնեփոխ պատկերներով:

**Հողը՝ լեզվամտածողության տարր – արտահայտչամիջոց**

Հնարավոր չէ բացառել, որ յուրաքանչյուր բանաստեղծություն ունի յուր հնչեղությունը՝ երաժշտականությունը: Յուրաքանչյուր հնչյուն ունի ձայնային տեմբր՝ բառի հնչյունախմաստային դաշտը ամբողջական դարձնող: Ուստի ուշագրավ է ԾԱՂԿԵ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ հեղինակի լեզվամտածողությանը բնորոշ դերանվանական հոդերով ստեղծագործությունների ինտոնացիայի ու առոգանության որոշակի երանգավորումը: Հողի կիրարկումը, ինչ խոսք, լեզվին հաղորդում է առավել ճկունություն: Հողերով պայմանավորված՝ կլանող ու անդրադարձ գագողությունների ելևէջներն ապահովում են բանաստեղծական մտքի առեղծվածային միջոց հնչյունային ու ռիթմիկ հոգեվիճակների փոփոխությամբ:

*«Ու ես քայլում եմ հին միջով // հոսում, ողորդում փողոցայինիդ // իմ քարեղջյուլը ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՍ // որ նաև քունն է»* («Ներհոսող արտահոսք», էջ 4):

Այս չորս տողերը չորս իրավիճակներ են ես-ի և դու-ի, որոնք ասես վերակերպվում, նոր շնչառություն են առնում հողերի հաջորդական փոփոխությամբ: Որպես հետևանք՝ կայանում է մեկ ընդհանուր վիճակ-երկխոսություն, որում ոչ թե նույնանում, այլ միահյուսվում են ես-ն ու դու-ն ընդհանուր բնութագրի մեջ, որը, ինչպես հեղինակն է ասում՝ իմ ար-նուն է՝ կապույտ թանաք: Բանաստեղծի համար ես-ն ու դու-ն մեկը մյուսով ներշնչվող ընդհանրություն են՝ այնպիսի գոյություն, ինչպիսին բանաստեղծի արյունն ու թանաքը միասին՝ ոչ ռիթմիկ չգրված, բայց մշտամաս պատասխանատվությամբ: *«Ես երևակում եմ պարզապես քեզանով»* («Հայտածում», էջ 13): Հետոն հատակ է՝ կյանքը մեկ էություն ու նպատակ ունի: *«Դուստր թակոցս գլխազրում է // օրվա ծիր գիրս, // ու ես բառ դարձած՝ իջնում եմ // շուրթիդ պայտանքին պատեպարվելու...»* («Օկտավա», էջ 14):

Ժողովրդախոսակցական լեզվում դերանվանական հոդերն ստեղծում են անմիջական, անկեղծ, ձևականությունից զերծ, շփումների տանող վարակիչ մթնոլորտ, որը հանգեցնում է խոսքի հակիրճությանը՝ առանց այլևայլության ու ձգձգումի, պարզ ու շիտակ, դիտողունակ ու դիպուկ: Այս հատկորոշումները բնորոշ են նաև «Ծաղկե մկրտություն» ժողովածուին, իհարկե, գեղարվեստորեն համապատասխան և ուրույն տիրույթում: Հեղինակը քննվող բանաստեղծություններում հողերի միջոցով խոսքը հակիրճելով նրանում կենտրոնացնում է զգայական էներգիա, որը սեղմված գույանակ է հիշեցնում. մեկ աստիճանաբար բացվում ու եթերային քնարականությամբ տարրալուծվում է երկուսի միասնությունում (*«Կշռել երազս ձայնիդ ելևէջով, // ու լույսը կթրթում // լերկ ծառի ճյուղին կառչած // միակ տերևի պես»* («Օրերից մի օր», էջ 50)), մեկ էլ միանգամից արձակվում՝ թռչում է անդարձ:

Արևը խաղում է գրգ-գրգ մագերիս հեղ/ու քարաքանդակ ընկածից/այսահարի աճապարանքով// ձգում-երկարացնում է սրվերը, // ներում ուսին, քաշում փանում, // փանում չրեմսվող երկիր, որբեր նվաղում է // հեռացող արվերածի Ֆշշոցը // ծանրի ստասիյունով իլպացող («Գիվոտ շարժում», էջ 45):

Հողակիր բառը՝ որպես «Ծաղկե մկրտություն» գրքի սեղմագրության տարր, նախադասության մեջ իր տեղը չի փնտրում, այն հատակ է և ուղղորդված ու բնական, ձգողական կամ վանման առանձնահատկությամբ:

*Մարներս շոյում են ճակատը, // հոնքերը, // կատնում քո թարթիչներին // փավիղալարեր, // որս բացում*

*ես աչքերդ, // անհունից / եկող թե գնացող / մեղեդուց // ազար անկում են շուրթերիդ / վարդաթերթեր: // Ինչ փար է ծաղկարոյրով շնչառությունդ // որդը մարներս անարաշության, // լալու չափ ծիծաղելի է նրա քրքրությունը («Գրգություն», էջ 35):*

Նրա որոնումը նախադասության ասելիքի նշանակետում է՝ ես-ից դու-ին կամ դու-ից ես-ին անցման «չեզոք գոտում»՝ աշխարհիկ կամ երկնայինի տարրալուծված տիրույթում:

*Ծամկայիդ փոխարեն գրիչս / մի կողմ է հավաքում վարսերիդ ծիսանքը, // բացելով պայտանքների ճամփան մարմնագուն, // ու աճպարարի ճարակությունը թեթև // հարդարում է երևակայությունս արևաշորք... // ես դեն եմ ներում կեղծամ / և... ամենին էլ խորվիրակ չեմ, ու զարմանալի է, // որ թևավորդ*

**ՀԱԿԻՐՃՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊՈԵԶԻԱՅԻ ԽՏԱԷՆԵՐԳԻԱ (Ինքնահայեցման փորձ)**

*վախեցած մուր չի գալիս, // ու դու... մեծ ու փոքր աշխարհներում թափառող / սիրահարդ ծայրյալ... չգիրես, // որ սիրում եմ գաղտնիքով բանաված էությունդ («Ձկնկիթե երագ», էջ 76):*

Մտացական հողերը, պատկանելության իմաստ հաղորդելով, «բառ-պատկերը» վերածում են անձնապատկան հոգեվիճակի՝ այն ներկանաժողով կտավին, դառնում է գույն-զգացողություն: *«Ժամանակի փոշին // արդեն խեղդում է շնչառությունս / ու ինձ գնդելով // խցկում քնի մեջ»* («Դեռ հիշող կա», էջ 81): Հակոբ Հարությունը բանաստեղծության մեջ նրբորեն է ընտրում տրամաբանության ու զգայականի չափաբաժինը և սյուժետային գծով հարահասակ ասելիքի գունարային իմաստն ամփոփագրում է հողակիր բառերով: *«Ես ժամանակահոսքից ծորացող անհանգստության / փորձում եմ քամի իմաստության աղբ / և պարզորոշ լսում ձայնդ՝ բարի կեսօր: Մի փար քամի տողակում է ներս, // որ եկել է աշնանային հեթիաթներում մոռացված / հնարքայր հողմադաջի թևերից / ու ազվածում է քեզ մուր երկր-պագելու թերող / վարդագունե տեսող»* («Տևականություն», էջ 88 ), այստեղ ձայնդ, ներս, տեսող բառերով ձևավորվել է ասելիքի ընդհանուր հայտարարը՝ իմաստությունը կյանքի միջօրեի հասունությամբ:



«Ծաղկե մկրտություն» գրքի որոշ գործեր («Վիրակապե լուսության», էջ 68, «Խոստովանանք», էջ 66, «Հավատ», էջ 67, «Ընդերահման», էջ 70, «Ծիլություն», էջ 73 և այլն), յուրահատուկ լինելով իրենց պատկերաշարժային մտածողությամբ, տեքստը կլիպային հարափոփոխ սիմվոլների հոսք են դարձնում ժամանակի և տարածության միջով: Այս ամենը միաժամանակ ասես խաղ լինի, որում դրվագ-դրվագ ներգրավվում է ենթատեքստը: Բանաստեղծության մեջ մտազգային էներգիան աստիճանաբար վերափոխվում է իմաստային ամփոփիչ վիճակի՝ ասելիքի:

*Ու ես չգիրեմ՝ ինչպես, բարձր, շար բարձր ծիծաղեցի, // ու այն որպես շփոթական / ծաղրի պես կախվեց սկանչներիցս / խափշիկի սերճանքի փայլիլող օղակների նման... // Չէ, գիրեմ, հիմա ինչպես փակեմ աչքերս / ու ձեռքերս պարզեմ, // որ մարներիս ծայրերը հպվեն արևի այրերին, // ու նրանք սառը չմնան, արյունս էլ խաղա նրանց մեջ, // որ նրանք փնտրեն պարող շուրթերի պաղ ուրվագիծը // համբույրի սպասող / դարձնելով այն կրակե խենթ օձախաղ... («Վիրակապե լուսությամբ»)*

Կամ այս մեկը: *«Լույսությունը սահում է / վարսերիդ զիգզգված խազի երկայնքով / ճակատագրի իմաստությանը հակառակ / և հայտնությունը / պարոտում է մենություն փանող / վեղարն սայաշխարհանքի... («Բացվող շնչառություն», էջ 63):*

«Գրական թերթում» (2011 թ.) տպագրված «Պատկերաշարժ, զգացողություն, միտք» հոդվածում դեռևս ընդգծել ենք. «Պատկերաշարժային մտածողությունը գործողություն է՝ տրամաբանության ու զգացումի՝ իրար լծորդող փոխակերպումով, ինչն էլ բացահայտում է տեքստային պատկերների շարժումներում որոշակի իմաստ, ենթագիտակցական շերտերը վեր հանող՝ հանգեցնելով իրական տրամադրության ու ասելիքի»: Այս բնորոշումը համահունչ է նաև «Ծաղկե մկրտություն» գրքին, ուստի՝ «Խոստովանանք» բանաստեղծությունից մեջբերենք մի հատված:

*Աշնան ծառի պես տերև-տերև հանձնվիր / հողի գգվանքին, որից ճառագում եմ ես / կավե փխրուստությամբ, // և կույսի կրծքերի պես մի՝ ցնցվիր, // որ չփլվեմ տերևներով ծածկված ճանապարհիդ // որպես արթեցման շատագույն խենթացում / կայծքարի տեսնելով փոքրված»:*

Պատկերային մտածողության դրսևորումներում հաճախ պատկերները մեկմեկու բացասում են, իսկ պատկերաշարժի դեպքում դրանք շարժվում են իրար լծորդված, և ենթատեքստի լեզուն առավել խաղարկում է ու դուրիս վերձանելի, որովհետև բանաստեղծի հայացքը անշարժ դիտանկյունից չի նկարագրում. այն նման է շարժուն, թրթռուն ու ապրեցնող հոլովակի:

**Բանաստեղծության շարժում կառուցիկությունը**

Հ. Հարությունի պոեզիան այժի է ընկնում դասական հատկանիշներով, որոնք են՝ ապրումը (մեծ մասամբ՝ վերապրումը), հուզականությունը, զգացումը,

# ՀԱԿԻՐՃՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊՈՇԻՆՎԱՅԻ ԽՏԱԵՆԵՐԳԻԱ

թեն այս որակումները զարգացող շարժման (գործողության) մեջ են (նույնիսկ պարբերության շրջանակում)՝ ինչ-որ իրավիճակից սկսած կամ բաց-դրվագի հենված: «Տնտեսաբանություն» բանաստեղծությունը ներկայացնելը վերոշարադրածը.

*Նշանակալիցումը դու ես/ու չծնված արողը/որպես թափանցիկ գիշերաշապիկ... (իրավիճակ),//Քահ- քահ հանում են այն/բազմիցից բազմի// ուխտավորի պես փնտրելով աչքերն (ապրում),// որ ասես//ամեն մի փուն/իր գոհն է պահանջում:Ես հասկանում եմ քեզ/իրիկնային իմ երազում (հուզականություն),// որովհետև գիրքում//ապրելու երջանկությունը// իմաստուն մեռնողի մեջ է քրքջում... (զգայականություն):*

«Ներհոսք» բանաստեղծության մեկ պարբերությանը ցույց տանք վերոնշյալ որակումների զարգացող շարժը.

*Քեզ հեղք վերքս է (բաց-դրվագ) ժպտում//սրբաճաք շուրթիս պես/ու- շացած հանրային սպասող (ապրում), ու հնչում են վաղնջական/ինաստությունները՝ զգայական թևերին կանչած, հանց զանգովակներ անպարտեհ պահին (հուզական)/ ժամանանին հասած// զարթոցիչի համատեղությամբ.../ու ծնողներին է ամենից շար անհրաժեշտը// վեհացումը դիմավորելու... (զգայական):*

Վերլուծվող ժողովածուի բանաստեղծությունները աչքի են ընկնում ժամանակի շարժման ծիրով պայմանավորված մի կառուցիկությամբ, որտեղ գուցակցվում են (ավելի ստույգ՝ փոխպատվաստվում են) իրական, ավանդական ազգային լեզվամտածողությունն ու առարկայական, ժամանակակից, տեսիլային պատկերները.

*Ես երկարում եմ մահճիս անկյունագծով//որ առաստաղը ծովի//հայելու հայացքը թեքվի/ու այլևս ինձ չանդրադարձնի ձայնով//Հակոբն է, էլի// որ արթնանալուց հետո //գործելով իջնեմ մահճիցս.../հարկապես ձախ ուրքի վրա.../ու օրը գլխիս ջարդվի ափսեի պես://Մանկությունից թոած մի մանչուկ...//«չարը խափանվեց, //չարը խափանվեց» գոռալով.../վագի անտարբերությանը միջով//ու ես որերորդ անգամ հասկանամ նորից //չսպասված բարերարներ//այս աշխարհին պետք չեն...// Ու շարունակում եմ/մահճիս անկյունագիծը մնալի/որպես սուրմետոկ... («Քավ լիցի» էջ 21):*

Հեղինակի բանարվեստում ավելի քան ուշագրավ են բառի աստիճանակարգային իմաստ(ներ)ի առանձնահատկությունն ու հանգուցակապային կիրառությունը բանաստեղծական կառուցում, որոնք ղեկորատիվ բնույթ չունեն՝ կշռույթ ապահովելու իմաստով: Այն ձիգ է ու բանաստեղծարնթացքի տեկտոնիկ արխիտեկտուրայում ունի մտածողության ուրույն ռճ:

Բառը բանաստեղծության տրամաբանությամբ զարգանում է արտաքին (այուժետային, նկարագրական, դրվագային) ու ներքին (խոհափիլիսոփայական) հոսքերով, երբ հայտնվում է տեքստի մեջ իր ճիշտ տեղում, դառնում է առեղծվածային միջավայրի՝ պոետիկայի կենսարարությունը պահող երակներից մեկը: Ահա թե ինչու Բան-ստեղծությունը, երբ չի սկսվում բառի ենթագիտակցական ընթերցումով, գերապատվությունը տալով զգայական ազդակներով կենտրոնանալուն, չի դառնում հոգեմտավոր, ասոցիատիվ պոետիկայի աշխարհ, որի տողերի գեղարվեստական փայլը աշնանային ծառի ճյուղերի հասունացած թավիշն ունի.

*Ակնախորշերումն քեզանից կաթած//արյան կարմիր գնդիկներն են*

*փրփրում.../ գունդակծիկվելով դառնում հայելի//ծուժառանգ սիրապարտի կանչը//ավերելով որպես ժպիտ.../ որից սկանչներս շիկանում ու այրվում են.../սպա նորից զնգում... -Ո՞վ եմ ես... («Ծուռ անտեր», էջ 5):*

## Ինքնադատություն

Ժողովածուի հեղինակային նորաբանությունները հաճախ դառնում են դիպվածական բառեր, որոնք, երկրադադրիչ բառաբարդումներ լինելով, չափածո տեքստի կարճ հատույթում միշտ չէ, որ արդարացված են, գործիական՝ մերերանարաք, ծուժառանգ, լանջաշոր, օրհնահորդոր, ինչամորթի, նազակերպ, հողակնճիռ, ձմադկարույր, ձայնաիշուր, ձգարաշ, ցեխաշար, թևաթավիչ, ավերիասարույր, չարքազարկ, չարքահաղթ, ազնվագոծում, գաղտնաշույլավող: Ի դեպ, համեմատաբար դիպուկ ու տեղին են այն նորաբանությունները, որ հանդես են գալիս որպես տեքստը բացող առաջին նշան՝ վերնագիր՝ «Ափսոսազերծում», «Քնքազեկում», «Շղարշաբերկրանք», «Երազահեմայություն», «Ջգայահեք», «Տնտեսաբանություն», «Կշռալծորդում», «Օղարեսիլ», «Առասպելահեք», «Չայնամիգ» և այլն:

Հակոբ Հարությունի լեզվամտածողության մեջ առկա են արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական իրողությունների համադրություններ, որոնք երբեմն ստեղծում են ոճական վերամբարձություն.

*...Բայց ոնկս կանչի հարազար ձայնի/ու վրնչոցս քարի ներսը քաշած// մեկեն կճայթեն իմ իսկ քրքիջով.../որ չարը դարձի գա/դեպի խոովքը մարդկային արյան... («Պարզաջրում», էջ 11)*

Կամ այս հատվածը «Շիրություն» բանաստեղծությունից.

*...կլլում եմ հաբը համբերանքի...// Վեր ու վար ներված, ձգարաշ կուպերիս միջով// շիրությունս ճամփա է բացում ու կանչում արև:*

Հակոբ Հարությունի պոետիկան գերծ չի մնացել անտիպոետիկայի դրսևորումներից, սովորության կենցաղի պատկերումից, բայց ինչպես քանդակագործն է օգտագործում քարի հնարավորությունները, այդպես էլ հեղինակը կարողանում է իր տեքստում ագուցել առօրյա-կենցաղային բնութագրումները, որոնք առավելապես ժողովրդական մտածողության դրսևորման ձևեր են.

*Մարի ծանուր գնդեկ-կացրեղ եմ// գրքիդ նկարում սկանչիդ հեքև...//Անթեղ հեռախոսով//ու խոսուրած հեքով գծվեցնում եմ քեզ.../դու էլ թե՛ հոգեզմնյլ հուրթի.../քեզ լավ եմ ճանաչում («Երկինք նետված նամակ», էջ 7):*

Կամ՝ «Ո՞վ եմ ես...//Դու... դու... ցավի ծունդ.../դու ես, դու... ծուռ անտեր... («Ծուռ անտեր», էջ 5):

## Վերջաբանը՝ Նորագվող նախաբան

Հակոբ Հարությունի «Ծաղկե մկրտություն» գրքի առաջին բանաստեղծությունը վերնագրված է «Ներհոսող արտահոսք», իսկ վերջինը՝ «Տեսականություն», որոնք ասես բազմակետեր լինեն, անսահմանից բերում ու անսահմանություն են տանում բանաստեղծական ժողովածուի էագգայական կենսագրությունը ժամանակահոսքից ծորացող ներհոսող արտահոսքով, որի շարունակականությանը հավատում է բանաստեղծը իր կապույտ թանաք-արյունով:

## Տարևիկ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ Արվեստաբան

### ԱՐՎԵՍԱԳԵՏԸ ԵՐԿՈՒ ԱՐՀԱՎԻՐՔՆԵՐԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ



Հավանաբար 2020 թվականի ավարտին շատերն էին սպասել, տարի, որ բնորոշվեց բացասաբար: Անկանխատեսելի բնութագրով կորոնավիրուսն ու կործանարար պատերազմն արմատապես փոխեցին բոլորիս կենսակերպը, աղավաղեցին մեր արժեհամակարգը: Դատարկված ու սպառված հասարակության համար արվեստն այս պահին ետնախորք է մղվել, և դա միանգամայն հասկանալի է: Այդուհանդերձ, այն միակ ոլորտն է, որ հավասարապես կապված է հոգևոր-գաղափարական դրսևորումներին, որոնց մեջ հաճախ պարփակված են բազում պատասխաններ:

Շատերիս համար այս օրերին հասարակական շփումներն անցանկալի

են, դատարկ ու կոտրված մարդն ավելի շատ մեկուսացման է ձգտում: Այնուամենայնիվ, չնայած այս ամենին, արվեստագետ Արթուր Մանուկյանը որոշեց դեկտեմբերի 22-ին Մ. Մարյանի տուն-թանգարանում կազմակերպել իր պլակատների ցուցադրությունը՝ մի միջոցառում, որն իրականում կատարված բոլոր անցքերի ամփոփումն է կարծես: Ողջ ցուցադրությունը ներկայացնում էր համավարակին և պատերազմին նվիրված պլակատներ՝ արվեստի մի ենթատեսակ, որ բավական ինքնատիպ է և ոչ տարածված. այն արագ արձագանքում է հասարակական-քաղաքական երևույթներին՝ երբեմն քննադատելով, երբեմն ծաղրելով, երբեմն էլ պարզապես փաստելով կատարվածը: Արվեստի այս ենթատեսակն ավելի շատ ասելիք է, քան գեղագիտություն, թեպետ դիտողի վրա անմոռանալի տպավորություն թողնելու համար սուր միտք և վառ երևակայություն է հարկավոր:

Արթուր Մանուկյանի պլակատներն առանձնահատուկ են այն առումով, որ ներքին գեղարվեստական կերպար հաղորդելուց բացի, հեղինակը նաև դրանց լուծումներն է առաջարկում, այսինքն՝ խնդիրը ոչ միայն բարձրաձայնվում և հետաքրքիր կերպով ներկայացվում է, այլ նաև որոշակի հանգուցալուծում է ստանում:



Մի քանի շաբաթ տևած ցուցադրությունն իրականում ավելի երկար կյանք կունենա, քանզի շատ դիպուկ բովանդակություն ունի. 2020-ի աշխարհացունց իրադարձությունները դաջվել ու փաստ են դարձել պլակատներում, դրանք տարիներ անց այս հակասական օրերի վավերագիրը կլինեն:

Պլակատի լեզուն յուրահատուկ մոտեցում է պահանջում ասելիքը ներկայացնել սակավ արտահայտչամիջոցներով, բայց առավելագույնս տպավորիչ ու հիշվող: Բովանդակային առումով նույնպես հարկավոր է հնարավորինս դիպուկ և ինքնուրույն լինել: Ջարմանայի է, բայց Հայաստանում քչերն են զբաղվում արվեստի այս ենթատեսակով, իսկ ցուցադրողների շարքում Արթուր Մանուկյանը միակն է, այդ իսկ պատճառով վերոհիշյալ ցուցադրությունը ավելի գրավիչ և հետաքրքիր է ներկայանում:



Ս կ ի գ ր Է 2 5

ուզում էր ասել Ավագը, բայց ծուռ բառի ռուսերեն համարժեքը չէր գտնում, համ էլ չէր ուզում Ռուբոյի սիրտը թեկուզ կատարյալ կտորել: Քայլում էին, Ժենյան իրենց հարևանի աղջկա մասին էր պատմում, որ բարակ ու համարյա սպիտակ մազեր ունեւ էր և աչքերի վրա՝ մի սիրուն խալ: Տղաներից ամեն մեկն իր երևակայության մեջ Ժենյայի հետ գրկում էր սպիտակամազ կանային և նրա հետ վայելում նրա տաք շուրթերի բուրբ: Ժենյան զգում էր դա, բայց չէր խանդում: Ինչ խանդեր, Մոնոլոգյանն տափաստանում իրիկսամուտը գեղեցիկ էր, տղերքը հարագառ էին դարձել իրեն, իսկ Տանյան... Տանյան հաստատ ուրիշ մեկին գտած կլինի: Գտած չլինեք, իր նամակներին կպատասխանեք: Մոռում կովում էր նրա հետ, հետո ձեռքը թափ էր տալիս՝ կարևորը տուն հասնելն է: Տուն հասնի՝ լայնարձակ Ռուսաստանում սպիտակամազ կարմիր շուրթերով աղջիկները քիչ չեն:

Մրճարանը դրսից էր փոքր երևում, ներսից ընդարձակ ու հարմարավետ էր: Ազատ սեղան կար: Նստեցին, գառան խորոված ու գարեջուր պատվիրեցին, հետը մոնոլոգյան ինչ-որ ուռելիք բերեցին, որ հավանաբար կաթից կամ կաթնամթերքից էր պատրաստված: Ուտում էին ախորժակով, Այրաթին ձեռ էին առնում մտերմաբար ու գարեջուր էին խմում:

- Բա գարեջուրն ինչի են խմում,- հարցնում էր Ռուբոն,- Մահմեդն էլ մասին ինչ է ասել:

Այրաթը չէր պատասխանում, ուտում էր ախորժակով ու գարեջուր էր խմում մանր կումերով: Գարեջուրն ընտիր որակ չունեք, բայց գարեջուր էր, խորովածը լավ էր, բայց քիչ էր, իսկ Ավագն այլևս փող չուներ: Փող չունեին նաև մյուսները: Չէին ուզում շուտ վեր կենալ: Մինչև գորամաս վերադառնալը դեռ չորս ժամ ժամանակ կար: Գնային, ինչ անեին: Ու գրուցում էին հանդարտ, Ժենյան ստիպել էր քաջագործություններից էր պատմում, Այրաթը բերանը բաց լսում էր նրան, Ռուբոն մեկ-մեկ չթթագնում էր թերահավատորեն ու հայերեն ընդհատում էր նրան.

- Հաստատ չափագնացում աս, խմ...
- Չտո՛,- նրա ասածը չէր հասկանում Ժենյան, բայց խոսակցության տոնից հասկանում էր, որ կասկածում է ու հավաստիացնում էր, որ երբ ծառայությունն ավարտեն ու գնան Խորհրդային Միություն, ինքն անպայման հյուր կկանչի Ռուբոյին ու կապացուցի:
- Իսկ, խմ, բը ինչ,- էլի հայերեն ասում էր Ռուբոն, բայց շարունակում էր հետաքրքրությամբ լսել Ժենյային:

Մրճարանը համարյա լիքն էր: Կողքի սեղանին նստած էին երեք տղամարդ ու մի աղջիկ: Կոնյակ էին խմում: Ավագը նայում էր աղջկա կարճ կտրած մազերին, հաճախ ժպտացող դեմքին ու էլեկտրական լանջի լույսի տակ նրան արևածաղիկի էր նմանեցնում: «Մն մազերով արևածաղիկ որտե՛ղ են տեսել», - ուղղում էր ինքն իրեն, բայց նրանից կտրվել չէր կարողանում:

Աղջկա ժպիտը շատ անուշ էր: Նայեց երկար ու աչքով արեց նրան: Աղջիկը ժպտաց: Էլի նայեց, էլի աչքով արեց, աղջիկն էլի ժպտաց: Ավագի համար անսպասելի էր: Կողքին երեք տղամարդ կա, բայց աղջիկն արդեն աչքերով խոսում է իր հետ: Մարդիկ գրուցում էին կանացուկ: Աղջկա կողքին նստած հաստ վզովը ինչ-որ բան էր պատմում, մյուսները լսում էին ուշադրությամբ: Հավանաբար հեղինակություն ունեցող, հարգված մարդ էր, ու աղջիկն էլ նրա հետ էր: Երաժշտությունը մեղմ էր: Ավագը չգիտեր երգիչը մոնոլոգերեն է երգում, թե՛ այլ լեզվով, բայց կիսախավարին շատ համահունչ երաժշտություն էր, մանավանդ, որ գարեջրից ուղեղը մի քիչ մթազնեցել էր: Վեր կացավ տեղից, մտտեցավ նրանց սեղանին ու աղջկան պարի հրավիրեց: Կողքի տղամարդն ինչ-որ բան ասաց մոնոլոգերեն, բայց Ավագը նրա կողմը չնայեց ու ձեռքը մեկնեց աղջկան: Աղջիկը զարմանալի փափուկ մարմին ուներ, կոնքերը շորորացնում էր դանդաղ ու հավում Ավագին: Ավագն ամուր գրկել էր նրան ու բաց թողնել չէր ուզում: Պարեցին երկար ժամանակ: Հետո ուղեկցեց նրան ու եկավ, նստեց:

# ԾՆՆԳՅԱՆ ՕՐԸ

- Բան չխոսեցիր,- հարցրեց Ժենյան:
- Ինչ լեզվով խոսեի,- հարցին հարցով պատասխանեց:

Տղաների խոսակցությունն այլևս չէր լսում: Հիմա Այրաթն էր ինչ-որ բան պատմում: Նրա քաղաքավարի, ասես վախվորած ձայնը կար Ավագի ականջի կողքին: Մոտենում էր, բայց ասես սահում էր ականջի կողքով: Հետո Ռուբոն էր խոսում: Չայները տարբերում էր ենթացիտակցորեն: Մոռով, աչքերով, սրտով աղջկա հետ էր: Էլի պարի հրավիրեց: Այս անգամ տղամարդու ձայնն ավելի կոշտ դարձավ: Ինչ էր ասում չէր հասկանում, բայց հաստատ գիտեր, որ չի ուզում՝ աղջիկն իր հետ պարի: Իսկ աղջիկը նրան չլսեց ու նորից վեր կացավ: Նրա մազերից տափաստանի, չոր հողի, մաքուր երկնքի իրար խառնված հոտ էր գալիս: Պարում էր նրա հետ ու մտովի պատմություն էր հյուսում՝ աղջիկը հարկադրված է եկել հաստավիզ տղամարդու հետ, հաստատ նրան չի սիրում, հաստատ երազել է իր նման մի տղայի մասին ու հիմա հանդիպել է: Տղամարդը վեր կացավ տեղից, մոտեցավ բարին, ու երաժշտությունն ընդհատվեց: Ավագը հասկացավ՝ նրա ձեռքի գործն էր, բայց ոչինչ չասաց: Աղջկան ուղեկցեց իր տեղն ու նորից նստեց:

Հիմա, երբ երաժշտություն չկար, սրճարանն արդեն մի տեսակ ուրիշ էր: Ավագի աչքին ամեն ինչ այլ կերպ էր երևում՝ մի տեսակ ամեն ինչ նյարդայնացնող էր դարձել, ու սիրտը նեղվել էր: Ուղեց գարեջուր խմել, բայց շտերը դատարկ էին: Կովեր դուրս գալ, նայել տափաստանի աստղաշատ երկնքին ու իր սրտի մեջ մտցնել աղջկա դեմքն չծարձակած սերը, բայց նաև գորամաս գնալ չէր ուզում: Կողքի սեղանի մոտ նստածները շարունակում էին կոնյակ խմել ու գրուցել: Առաջվա պես հիմնական խոսողը հաստավիզն էր:

Մատուցողը եկավ շեղաչք ժպիտով ու սեղանին օղու շիշ դրեց:

- Կողքի սեղանից են հյուրասիրում,- ասաց ի պատասխան Ռուբոյի հարցական հայացքի:

Ռուբոն մի պահ հայտնվեց անորոշության մեջ: Չգիտեր անեղիքը: Թե քաղաքացիական կյանքում լինեք, որպես պատասխան ինքն էլ երկու շիշ կուղարկեք նրանց սեղանին, բայց հիմա զինվոր էր, գրպանում փող չկար, ու չգիտեր՝ շտրիակալություն հայտնեք, թե՛ վիրավորվեք: Մտածեց մի պահ, և վիրավորանքը հաղթեց: «Ո՛նց թե... իրենք կոնյակ խմեն ու մեզ օղի հյուրասիրեն»: Չգիտես ով մոնչում էր ներսում: Ռուբոն ուզում էր լռեցնել սրտի մեջ ռոնացող չարի ձայնն ու չէր կարողանում: Վեր կացավ սեղանից, վերցրեց օղու շիշը, մոտեցավ նրանց սեղանին, դրեց ու դեմքն չբացված կոնյակի շիշը վերցնելով վերադարձավ:

Հաստավիզի վայնաստանն ասես իր հեռավոր նախնիների վայրենի ճիչը լինեք: Գոռնում էր, հայհոյում, բողբոջում, հայտնի չէր: Առաջին հարվածը Ավագը տվեց, խփեց նրա գոռացող բերանին: Բայց հաջորդ պահին զգաց, որ հարվածից իր շրթունքը ճկվեց: Հետո աթոռներ էին թռչում օդում, հետո սրճարանում եղած բոլոր մոնոլոգները միավորվեցին իրենց դեմ, ու Ժենյան զգաց, որ շրջափակում են իրենց:

- Փախչե՛ք,- ասաց կիսաձայն, հարվածելով ու հարվածներ ետ մղելով:

Թե երբ էր պոկել աթոռի ոտքը, չէր իմացել: Դուրս եկան արագ, դուռը ծածկեցին ու աթոռի ոտքը մոտեցրեցին բռնակի մեջ: Հետո վագում էին: Մութը դեռ լրիվ չէր պատել աշխարհը: Վագում էին զինվորի տվոր վագքով ու ականջի ծայրով լսում, թե ինչպես են հետապնդում իրենց: Վստահ էին, որ ոչ հաստավի-

զը, ոչ էլ նրա ընկերներից որևէ մեկը չէր կարող իրենց հետ մրցել ու հասնել հետևներից, բայց վագում էին: Մրճարանից դուրս գալու վերջին պահին աչքի պոչով մի անգամ էլ էր նայել աղջկան ու տեսել, թե նա ինչպես է կույ եկել անկյունում, սեղանի տակ: Աչքերը խեղճ էին, վախեցած, ու դեմքը նորից արևածաղիկի նման էր:

Հասան գորամասին, դռնով ներս մտնել չէին կարող: Կնկատեին իր դեմքի արյունը: Թռիչքով պարսպի բարձրությունը հաղթահարեցին: Ավագը տեսավ, թե ինչպես նախ Այրաթն անցավ պարսպի վրայի փշալարերի տակով, հետո Ռուբոն ու Ժենյան: Ինքն էլ էր պարսպի վրա, բայց փշալարը բռնել էր շորն ու չէր թողնում: Իսկ ճանապարհով պարեկների ավտոմեքենան էր անցնում: Կիսամթի մեջ քարացավ փշալարերի տակ: Եթե բռնեին, հաստատ զինվորական տրիբունալ էր ընկնելու:

- Աստված ջան,- ասաց մոռում,- այսք իմ ծննդյան օրն է: Աստված ջան, եթե կաս, օգնիր ինձ:

Մեքենան անցավ առանց նկատելու: Մի կերպ պոկեց հագուստը: Չէր ուզում, որ պատովեր, եթե պատովեր, մի լրացուցիչ ապացույց կարող էր լինել: Հագուստն ազատեց զգուշությամբ ու պատից ներքև թռավ:

Մոնոլոգների աղմուկն ավելի ուշ լսեցին: Եկել էին աղմուկով, հրամանատարին բողբոջում էին իր զինվորների անկարգության համար: Դժգոհում էին, որ իրենք հյուրասիրել են նրանց, իսկ նրանք անպատկառ ու վատ են պահել իրենց:

Ավագը համոզված էր, որ եթե իրեն տեսնեն, կճանաչեն պատված շրթունքից:

Հրամանատարը հրամայել էր բոլորին շարվել վարժահրապարակում: Ավագը ոտքը կախ էր զգել:

- Դ՛ոն ես,- հարցրեց հրամանատարը: Աչքերը խիստ էին:

«Թե մոնոլոգներն էլ չլինեն, սա տրիբունալ կտա ինձ», - մտածեց համակերպված ու գլխով արեց՝ հա՛:

- Շարք մի՛ կանգնիր,- իր համար անսպասելի ասաց հրամանատարը,- մնա քո տեղում, աչքներին մի երևա:

Ասաց ու գնաց:

Հետո մոնոլոգները անցել էին շարքի առջևով, նայել բոլոր զինվորների դեմքերին, հերթով ուսումնասիրել ամեն մեկին ու ոչ մեկին չէին ճանաչել: Աղջիկը մի քիչ ավելի երկար էր կանգնել Ռուբոյի դիմաց, նայել աչքերին, հետո գլուխը շարժել էր բացասաբար՝ իբր սա չէ:

Հետո մտել էին հրամանատարի սենյակ, գրուցել մի քիչ ու թողել, հեռացել էին:

Հրամանատարը հաջորդ օրն իր մոտ էր կանչել Ավագին, նայել ճաքած շրթունքին ու ասել էր խստությամբ.

- Գնա բուժկետ, շրթունքդ կարել տուր, թե չէ ճաքած շրթունքով նապաստակի կնամանկես:

Ավագը ժպտացել էր ցավող շրթունքով, գլխով համաձայնության նշան արել ու սրտի մեջ վախը պահած՝ դուրս էր եկել նրա մոտից, բայց բուժկետ չէր գնացել: Ո՛վ իմանա, գուցե բուժկետից ինչ-որ մեկը բերանբացություն աներ:

Անցել էր մի շաբաթ, ու վերքը լավացել էր ինքնին՝ վերևի շրթունքի վրա սալի թողնելով:

Ավագը, նույնիսկ տարիներ անց, սափրվելիս ածելին զգուշորեն սահեցնում էր խորը սալի վրայով, հիշում մոնոլոգի մեջ աչքերն ու արևածաղիկի նմանվող դեմքը:

15 սեպտեմբերի 2020 թ.

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գրական թերթ» և ՀԳՄ աշխատակազմը ցավակցում է Սվետա Դեմիրճյանին՝ սիրելի եղբոր՝ Պետրոս Աբրահամյանի անժամանակ մահվան կապակցությամբ:**

<p><b>Գրական թերթ</b></p> <p>Գլխավոր խմբագիր՝ <b>Կարինե ԽՈՒԴԻՎՅԱՆ</b></p>	<p>Հրատարակում է «ՀԳՄ»-ի «Գրական թերթ» խմբագրությունը՝ ՍՊԸ- ն: Կրակայան՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ: Տպագրանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ: Լուրերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարգիչի հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունն իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ- ն՝ ՀԳՄ «Լ. Չ. ՄՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:</p>
---	--

0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakantert@gmail.com